


դուոց ձեռքով Սրանցից Արողէս կամ Էփրողէս առաջինը ժառանգեց պարթևական գահը: Իսկ նրա եղբայր Միհրդատ Գ-ը թագաւորեց Մարաստանում: Գրամների վերայ Արողէս կոչուում է՝ «Արողէս արքայից արքայ»: Իսկ Միհրդատը՝ «մեծ արքայ»: Սրան իւր անգթութեան համար պարթև աւագանին փոխեց Մարաստանից և Արողէսը մնաց միակ թագաւոր: Միհրդատը փախաւ Լսորիքի կուսակալ Գարինիուսի մօտ: որ Եփրատն անցել և Միհրդատին զէնքի ուժով իւր գահի վերայ էր ուղում հաստատել: երբ հրաման ստացաւ Պոմպէոսից գաւառը Եգիպտոս և իւր գահի վերայ բազմեցնել Պողոթնոս ԺԱ-ին: որին այնտեղից գուրս էին քշել: Գարինիուսը Միհրդատից ազատուելու համար յայտնեց նրան: որ բանակից հեռանայ: իսկ զինուորներին յայտարարեց: որ նա փախել է: Միհրդատը միայնակ փորձեց իւր բաղդը և կարողացաւ գահը խլել Արողէսից: սակայն այս յաղթութիւնը երկարատեւ չեղաւ: որովհետեւ Արողէսին օգնեց պարթևաց թագապիւր նախարարութեան նահապետ Սուրէնը: որին անձնատուր եղաւ Միհրդատը: Արողէսը իւր իսկ աչքի առաջ սպանել տուաւ եղբորը:

Ըստ զէպքերը երկարել էին մինչև 54 թ.: երբ յանկարծ պարթևական հօդի վերայ երևեցաւ առանց որ և է պատճառի միմիայն աւարի յուսով Կրասոս հռոմայեցի զօրավարը: Թեթեւ յաղթութիւնից յետոյ Կրասոսը Ասորիքում ձմեռեց եւ յաջորդ տարին պատերազմ սկսելով Հնետեւեց իւր դաշնակցի՝ հայոց Արտաազը Բ. թագաւորի: խորհրդին: որ հրաւիրում էր նորան Հայաստանի վրայով յարձակուիլ պարթեւաց տէրութեան վերայ: խոստանալով հռոմայեցի զօրավարին ամեն տեսակ օգնութիւն: Կրասոսը ձմեռոցներէց նոր էր դուրս գալիս: երբ պարթև ղեկավարները եկան յիշեցնելու նորան իւր անիրաւ վարմունքը: որ առանց հետեւանքի մնաց: Պարթևները ձմեռը պատրաստուել էին: Սուրէն զօրավարը Միջագետքից քշել էր սակաւաթիւ հռոմայեցի պահակներին և մեծ հեծելազօրքով դիմում էր Կրասոսի դէմ: Որողէս թագաւորը արշաւեց Հայաստանի վերայ: որ Արտաազին պատժէ հռոմայեցիներին առաջարկած օգնութեան համար: եւ թողլ շուտայ խոստացած օգնութիւնը հասցնելու: 53 թ. յունիս 6-ին Միջագետքում տեղի ունեցաւ այն մեծ ճակատամարտը: որի մէջ Սուրէնը մեծ յաղթութիւն տարաւ հռոմայեցոց վերայ: նոցա զօրքից սպանելով մօտ 20 հազար մարդ: որոնց մէջ և Կրասոսի որդուն: իրեն Կրասոսին: 10 հազար հօդի էլ գերելով: Սուրէնը Կրասոսի գլուխը և ձեռքը

ուղարկեց Հայաստան Արողէս թագաւորին: յաղթութեան նշանը հասաւ այն ժամանակ: երբ Արողէս յաղաղութիւն էր հաստատել Արտաազի հետ և տունում էր նրա քրոջ հարսանիքը իւր աւագ որդի Բակուրի հետ: Կրասոսին յաղթող Սուրէնի վիճակը շատ դառն եղաւ: որովհետեւ Արողէսը վախենալով նրա մեծ հռչակից: հրամայեց սպանել նրան: Պարթևները չկարողացան իրենց յաղթութիւնից օգուտ քաղել: 52 թ. միայն մի փոքրիկ բանակ ուղարկեցին Լսորիք: որտեղից նրանց հեշտութեամբ յետ վանեց Կասիոսը: Միայն յաջորդ տարին մի մեծ բանակ ուղարկեցին պարթևները արքայորդի թագաւորի և Օղակէս զօրավարի առաջնորդութեամբ ղէպի Լսորիք: ուր հռոմայեցիք շատ քիչ գնդեր ունէին և տեղացի ժողովուրդն էլ դժգոհ էր հռոմական խստութիւնից: Սեպտեմբերին 51 թ. Կասիոսը մի փոքրիկ յաղթութիւն տարաւ պարթևների վերայ: որին զօհ գնաց և Օղակէս: Բակուրը ձմեռեց Լսորիքում: և Միջագետքի սատրապ Օրոնդապատէսը դժգոհ Արողէսից ապստամբեց և Բակուրին թագաւոր հռչակեց: որից կասկածելով Արողէսը յետ կանչեց նորան իւր զօրքով Լսորիքից: Եւ յայտնով 50 թ. յուլիս ամսին Լսորիքը մաքրուեցաւ բոլորովն պարթևներից:

(Շարունակելի)
Ն. Զարամանց.



ՄԼՏԵՆԵԼԻՕՍՈՒԹԻՒՆ.

Die armenischen Handschriften des klostere von Argni (Arghana). Dr. Fr. Müller.— Wien 1896 (Արղնի վանքի հայերէն ձեռագիրները. Գր. Փր. Միւլլէր. Վիեննա, 1896). — Յայտնի հայագէտ Փրիդրիխ Միւլլէր ներկայացրել է Վիեննայի Գիտութեանց ձեւարանին և հրատարակել է այս վերնագրի ներքոյ զերմաներէն թարգմանութեամբ զքրքրի այն ցուցակը: որ յառաջ է բերած Հայր Սրուանձտեանի Թորոս Աղբար. Լ. Բ. եր. 383—410: Իւր կողմից նա միայն մի փոքրիկ յառաջարանով տեղեկութիւն է տալիս Արղնի քաղաքի և նորա Բարձրահայեաց ս. Լատուածածին վանքի տեղագրութեան մասին: և հայագետների ուղարկութիւնն է հրաւիրում այդ վանքում պահուած ձեռագիրների կարևոր (147 հատ) ժողովածուի վերայ: աւելացնում է նաև մի քանի գիտնական ծանօթութիւններ: Արղեօք կոտորածների միջոցին ինչ բաղդի ենթարկուեցան այդ ձեռագիրները: որոնց մէջ եղել են արդարև շատ կարևորները:

Armenien, Beitrag zur Kenntniss der Geschichte, der Kirchlichen und äusseren Verhältnissen des Landes. Spanuth Pöhlde — Stuttgart. 1896. (Հայաստան. Այդ երկրի պատմութեան, եկեղեցական և արտաքին հանգամանքներին ծանօթանալու նպատ. Հպ. Պետր. Ընտանգար, 1896)։ Աւերջին ժամանակ հայոց մասին լոյս տեսած բազմաթիւ տետրակներից մէկն է այս, որ մեր ձեռքն է հասել։ Բնչպէս վերնագիրը ցոյց է տալիս՝ անծանօթ հեղինակն անում է այստեղ նախ Հայաստանի քաղաքական և ապա եկեղեցական պատմութիւնը, հետեւելով սովորական աւանդութեան, Այնուհետև նա տեղեկութիւններ է տալիս կաթողիկոս հայերի, հայոց եկեղեցւոյ վարչական կազմակերպութեան, գրականութեան և ուսումնական հաստատութիւնների, պանդխտութեան, ընտանեկան կեանքի, երկրի տնտեսական և քաղաքական դրութեան, արդիւնաբերութեան, պարապմունքների և վերջապէս արդի ողբալի միջակի մասին։ Բնականաբար այս գրուածքն ևս ազատ չէ սովորական սխալ կարծիքներից, բայց առ հասարակ համակրութեամբ է վերաբերուում զեպի հայերը, աշխատելով անկողմնապահ լինել ամեն կերպ։

Եկեղեցական գրականութեան համար մեծ նշանակութիւն ունեցող մի նոր գիւտ է եղել վերջին ժամանակ, Պրոֆ. Լանդակ յայտնել է Բերլինի Գիտութեանց ձեւարանում, որ իւր նախկին աշակերտ Գր. Արլ Ըմիգա Բ. դարու գնոստիքական մի գրուածք է գտել զպաի լեզուով, Այս գիւտի նշանակութիւնը նորանում է, որ գնոստիկեան աղանդները մեծ դեր են խաղացել Բ. դարում և նոցա հետ մարտնչելով է, որ մանուկ քրիստոնէութիւնը եկեղեցի է կազմակերպել՝ մինչդեռ աղանդաւորների բազմաթիւ գրուածքներից գրեթէ ոչ մէկը մեր ձեռքը չէ հասել և եկեղեցական պատմիչները ստիպուած են եկեղեցական հարերի պատմածներից կամ մէջ բերած կտորներից միայն եզրակացութիւններ անել նոցա մասին։ Աւստի առանձնապէս հետաքրքիր էր նոցա համար ունենալ մի սեփական գնոստիկեան գրուածք, որպէս զի կարելի լինէր անմիջական աղբիւրից ծանօթանալ այդ աղանդների հետ և ստուգել, թէ արտաքինները ինչ չափով ուղիղ են դատել նոցա մասին։ Այդպիսի մէկն է ահա Ըմիգայի գիւտը, Բերլինի Եզրագրութեան համար Ասհիրեում ձեռք բերուած մի պապիրուս ձեռագրի մէջ, որից միայն 6 թերթ ընկած է, նա գտել է Աւետարան ըստ Մարիամ ու Իմաստութիւն Յիսուսի Քրիստոսի և Գործք Պետրոսի վերնագրով գրուածքները, որոնցից հետաքրքիր է մանաւանդ առաջինը, որովհետև Բ. դարու առաքելական հայրերից Իրենէոսը գործ է դրել այն բարբելո գնոս-

տիկեանների մասին գրելիս, Այս գրուածքների հրատարակուելուն սպասում են այժմ հետաքրքրութեամբ մասնագէտները։

Մի նկատուութիւն.

Ոչնչէս Արարատի ընթերցողներին յայտնի է, Յուլիս համարում պ. Եալաթեանի Մնացորդաց զբքերի նորագիւտ թարգմանութեան մասին գրած յօդուածին մենք մի ծանօթութիւն էինք աւելացրել, այն մտքով, թէ մի գուցէ Յարգելի Աստուգապետի փոքր ինչ մութ կոսքերն իւր գիւտի մասին սխալ հասկացոյն շարժողի օրինակի համար, թէ նա գիւտն արել էր ու յետոյ է իմացել, որ Հայր Եղիան եւս նկատել է, համեմատութիւններ անելիս, նոր թարգմանութեան տարբեր ընթերցումները։ Արդ, Հանդէս ամսօրեայ թերթն իւր Հոկտեմբեր համարում (Կր. 545), ըստ երեսութիւն պ. Եալաթեանին շատագովելու նպատակով, որին վիրաւորելու մենք ամենեւին միտք չենք ունեցել՝ աշխատում է մեր ծանօթութեան անտեղի լինելը ցոյց տալ, այն հիւան զիտայ, որ պ. Եալաթեան յիշատակել էր արդէն Հայր Եղիայի անունը եւ որ վերջինս չէ նկատել, թէ այս տարբերութիւնն յառաջ կուայ՝ ս. Գրոց, ասորերէնէ թարգմանուած ըլլալէն։ Եւ նա երբեք ցոյց տալ իրարմ, անկախ առաւելութիւններն, մի եզրակացութիւն, որի դէմ երբէք չենք վիճել, բայց մենք յիշաւի այն կարծիքն ենք ունեցել, թէ իրարմ, անկախ առաւելութիւններն են նաեւ։ Զքաղուելով երեք շարաքի չափ՝ ս. Ըմիգայի մատնադարանում — գտնել ըստ իստաւոք զիպուած ու մի գըլագիր Աստուածաշնչի մէջ մնչիս այսօր ըսու անծանօթ մի սովորական հայ թարգմանութիւնի քոլորովն տարբեր մի այլ թարգմանութիւն, եւ մտնելու ս. Ըմիգայի մատնադարանը, հարցուիտո՞ծ անել Հայր Եղիային իւր գրադմանց մասին, ու տեղեկանալով նորանից, որ նորա ծնոցի տակ եղած մի օրինակ աստուածաշնչուկի Ա. եւ Բ. Մնացորդաց զբքերը խիստ զգալի տարբերութիւններ են ներկայացնում սովորական օրինակից՝ անել, համեմատել ու տեսնել, որ արդարեւ տարբեր են, եւ եւս թաղի ելով, որ այդ տարբերութիւնն ասորերէնից թարգմանուած լինելուց է յառաջ գալիս՝ գիտնական սշխարհի ուշադրութեան արժանի մի գիւտ համարել այն։ Մ. Ըմիգայի մատնադարանում մէջ կատնուէին անշուշտ գտնէ 4-5 անձինք, որոնք ըստ իստաւոք զիպուած ու Հայր Եղիայից նորա նկատած տարբերութիւնների մասին տեղեկանալուց յետոյ՝ այդ օրինակի արժէքը հասկանային, կատնուէր գտնէ մէկը, որ ասորերէնից ու աստուածաշնչուցից աւելի՝ տեղեկութիւն ունենալով քան պ. Եալաթեան՝ աւելի իրաւունք ունենար ներթադրութիւններ անելու, եւ աւելի զիրուէին՝ արդէն հրատարակած լինելու նորագիւտ թարգմանութիւնը։ Բայց ս. Ըմիգայի մատնադարանի ձեռագիրներով պարապում է ահա քանի տարի է միաբաններից Գ. Տէր Մկրտչեանը, պարապել է Արտ. Մարտի վարդապետը, պարապել են ուրիշ շատերը շարաքներով՝ ամիսներով եւ տարիներով, եւ այդ գիւտը չեն արել, որովհետեւ ոչ որի մտքից չէր անցնի յատկապէս Մնացորդաց զբքերի գրաղուելու եւ նորութիւն որոնելու, չէր անցնի նաեւ Պրոֆ. պ. Եալաթեանի

Պ. Եալաթեան կարծեմ ասորերէն չգիտէ մնչիս իսկ, եւ ուրեմն մնայն ենթադրութիւն անել կարող էր, որ պապ պէտք է ստուգել ուրիշների օգնութեամբ։